

է ոչ միայն վէպի առաւելագոյն ամբողջական տարբերակը, այլեւ արժէքաւոր տեղեկութիւններ վէպի ծագման, կենցաղավարման առանձնայատկութիւնների վերաբերեալ: Սրուանձտեանցը վէպին կցել է մի սեղմ առաջաբան, ուր չափազանց կարեւոր ու ճշմարիտ դիտողութիւններ է անում վէպի առասպելական, պատմական շերտերի, հայրենիքի, կենցաղավարման շրջանների, ծաւալի, ժողովրդայնութեան մասին: Այդ առաջաբանում արծարծող հարցերը հիմք հանդիսացան վէպի հետագայ հետազոտողների համար:

Գ. Սրուանձտեանցը ինքը խորապէս գիտակցել է վէպի արժէքն ու նշանակութիւնը. «Այս գործիս հրատարակութիւնը հասկացողին համար արժէք կ'ունենայ, բայց կարծեմ արհամարհողներ աւելի պիտի լինին եւ այսպանողներ», - նկատում է նա¹⁷: Սակայն կատարում է հակառակը: Ազգային վէպի առաջին պատմի հրատարակութիւնն արժանանում է խանդավառ ընդունելութեան: Հրատարակիչ-բանահաւաքը ստանում է բազմաթիւ շնորհաւորական, խրախուսական նամակներ արեւմտահայ գործիչներից, անհատներից (Գ. Պատկանեան, Ղ. Ալիշան, Ս. Մանգինեան, Գր. Խալաթեանց, Ս. Դէրվիշեան, Յ. Շահնազարեան եւ այլք)¹⁸, մամուլում լոյս են տեսնում դրուատական գրախօսութիւններ¹⁹:

Վէպի անդրանիկ պատումի տպագրութիւնից շատ չանցած այն վերահրատարակում է²⁰, թարգմանում եւ տպագրում ռուսերէն²¹, ապա նաեւ գերմաներէն²² (Գր. Խալաթեանց, Աբ. Յովհաննիսեանց): Վէպի հրատարակութեամբ մերժում է այն կարծիքը, թէ հայերը վէպ չունեն: Հետզհետէ աճում է հետաքրքրութիւնը վէպի նկատմամբ, մի երեւոյթ, որ շարունակում է մինչեւ մեր

օրերը: Բանահաւաքների մի քանի սերունդների ջանքերով գրի է առնում շուրջ 200 պատում, որոնց մեծ մասը հրատարակուել է համահաւաք ժողովածուների տեսքով՝ դիտական բարձր, ժամանակի պահանջներին համապատասխան չափանիշներով: Սակայն Գ. Սրուանձտեանցի պատումը տակաւին պահպանել է իր հմայքն ու առանձնակի պատմաշակութային նշանակութիւնը:

Բանահաւաքը իր պատումը վերնագրել է «Սասունցի Դաւիթ» ոչ պատահականօրէն. նրա պատումը ներկայացնում է գերազանցապէս Դաւիթին, նրա կենսագրութեան իրողութիւնները, արկածները, նրա կռիւը իր նախնիների ունեցուածքը վերադարձնելու համար, Մսրայ հարկահանների դէմ, ամուսնութիւնը, մենամարտը, սպանութիւնը, մահը, հայրենի սրբավայրերի պաշտամունքը, նրա որդու՝ Մհերի ծնունդը, Ագրիու քարի մէջ փակուելը: Սրուանձտեանցի պատումը ներկայացնում է ազգային հերոսավէպի բուն էութիւնը, դա պատմութիւն է վէպի գլխաւոր գործող անձի ծննդի, կեանքի, օտար նուաճողների դէմ մղած նրա կռիւների ու վախճանի մասին: Հետագայ գրառումներով երեւան եկան այլ գործող անձեր, վէպը կարծես թէ աւելի ամբողջացաւ, սակայն դրանք սոսկ յաւելումներ են, թէեւ կարեւոր պատմաշակութային շերտերով եւ վերնագիրն էլ՝ «Սասնայ ծոբը» արհեստական: Հայ ժողովրդի հոգեւոր մշակութի տարբեր բնագաւառներում վէպի մշակումները հիմնականում աղբրւում են Դաւիթ անուան հետ:

«Գրոց ու բրոց եւ Սասունցի Դաւիթ կամ Մհերի դուռ» գրքի առաջաբանում դժգոհելով իր զբաղուածութիւնից, Սրուանձտեանցը գրում է. «Այնուամենայնիւ տակաւին 'ի ձեռին ունիմ հրա-

տարակելու արժանի բաներ, թէ հին, թէ նոր, զորս կը խոստանամ հետզհետէ 'ի լոյս ածել»²³: Եւ նա իր խոստումը կատարում է «Մանանայ»-ով ու «Համով հոտով»-ով: Նշուած ժողովածուներում պատմագրական նիւթերի հետ միասին զետեղուած են բանահիւսական տարբեր ժանրերի նիւթեր. հեքիաթներ, զրոյցներ, աւանդութիւններ, առակներ, երգերի ու վիճակի խաղերի ընտիր շարքեր, հմայական աղօթքներ, աղօթք-օրհնանքներ, բարեմաղթանքներ, հանելուկներ, շուտասելուկներ, մանկական բանահիւսութեան նմուշներ:

Այդպիսով կարելի է հաստատապէս ասել, որ Սրուանձտեանցի բանահիւսական ժառանգութիւնն ընդգրկում է հայոց աւանդական հոգեւոր մշակոյթի այս բնագաւառն ամբողջովին:

Հայ ժողովրդական հեքիաթների առաջին քիչ թէ շատ ամբողջական հրատարակութեան պատիւը պատկանում է Սրուանձտեանցին, թէեւ այժմ յայտնի է, որ առաջին պարբերական գրառումները կատարել են Բահաթրեանները 1860 թ. Շուշիում²⁴: Սրուանձտեանցի լոյս ընծայած հեքիաթների շնորհիւ հայ բանագիտութեան տրամադրութեան ներքոյ կան հրաշապատում հեքիաթների դասական հրաշապատում են «Օձէ-այնպիսի նմուշներ, ինչպիսիք են «Մանանայ»-ը, «Համարան»-ը, «Անտես Աննամանը», «Սըմոն», «Անմահական խնձորը», «Գառնիկ աղբերը», ինչպէս նաեւ իրապատում հեքիաթների «Դրժիկոն», «Կընկան շառը», «Երեք եղբայրներ» եւ այլն: Նշուած հեքիաթների սիւժէների առկայութիւնը արցախեան գրառումներում, Տ. Նաւասարդեանի Այրարատին վերաբերող հրատարակութիւններում հետագայ տասնամեակներում վկայում են հեքիաթների ազգային միաս-

նական երկացանկի գոյութեան մասին: «Մանանայ», «Համով հոտով» էջերում տեղ գտած հեքիաթներն աչքի են ընկնում ժողովրդի վաղնջական պատկերացումների, առասպելական մտածողութեան վերապրուկների, հաւատալիքների ու կեանքի այլեւայլ կողմերի վերաբերեալ տեղեկութիւնների պահպանմամբ, խօսուածքի ու պատմելաոճի հաւաստի վերարտադրութեամբ. հանգամանքներ, որ այն ժամանակաշրջանում դիւրին չէր ի կատար ածել: Սակայն Սրուանձտեանցը օժտուած լինելով լսածը մտապահելու եւ գեղարուեստականօրէն վերապատմելու բացառիկ ձիրքով, տուեալ պարագաներում հանդէս է գալիս ոչ միայն իբրեւ բանահաւաք, այլեւ հմուտ ու ճարտասան բանասաց:

Սրուանձտեանցի բանահիւսական ժառանգութեան մէջ ընդգրկուն ու հարուստ է երգարուեստի բաժինը: Երգերի փնջերը իր ժողովածուներում նա տեղագրել է որոշ խորագրերի ներքոյ, հիմք ընդունելով տեսակը, ծագման վայրը, բնոյդունելով տեսակը, ծագման վայրը, բնոյթը: Այսպէս. «Աշխարհիկ երգեր»²⁵ խոթարի տակ նա ներկայացրել է ծիսական երգեր. «Երգ հարսնածութեան», «Գովա-սանք փեսայի ու հարսի», «Համբարձման վիճակի խաղեր», ապա կենցաղային ստեղծագործութիւններ. «Երգ վրուշիկնեստեղծագործութիւններ. «Երգ ի վերու» (այսինքն ուշտունցւոց), «Երգ ի վերայ կորեկի», «Էրկան կնկան սէր» եւ այլն: «Ակնայ ժողովրդական երգեր»²⁶ խոթարի տակ տեղադրուած են ծիսական խորագրի տակ տեղադրուած են «Հարսառ գնաստեղծագործութիւններ. «Հարսառ գնաստեղ կանայք առ հարսն ասեն», «Մեկնեցող կանայք առ հարսն ասեն», «Առ դրան փեսային լու պահուն ասեն», «Առ դրան փեսային ասեն», ապա՝ օրօրոցային, պանդխտի, «Կարոս խաչի» մի սգոյ, հանրայայտ «Կարոս խաչի» մի տարբերակ: Այնուհետեւ լոյս են տեսնում նրա գրի առած, հաւաքած երգերի, պա-

րերգերի շարքերը՝ ներկայացնելով ազգային, տոհմիկ երգը իր բոլոր տեսակներով. մանկախաղաց, մանկան գովասանքի, խաղերգեր, երգիծական, աշխատանքի, սիրոյ, բնապաշտական, պանդխտութեան, սգոյ, ճրագալոյցի երգերի՝ մեներգերի ու զուգերգերի բացառիկ արուեստաւոր նմուշներ: Եթէ հեքիաթների, արձակ-պատմողական բանահիւտութեան մասին կարելի է ասել, որ ժողովուրդը նաեւ բանասաց է, ապա նոյնը չի կարելի ասել երգերի վերաբերեալ: Իր երկարատեւ ուղեւորութիւնների ընթացքում Սրուանձտեանցը ականջալուր է եղել ժողովրդի ձայնին, ականատես՝ խաղ ու պարին, իր նիւթը անմիջականօրէն կատարող-երգողներից, պարողներից. «...հասկացողին շատ քնքուշ է գաւառական ժողովրդական երգ, մանաւանդ երբ բնիկներու բերնով կ'երգուի եւ երբ կտրիճ երիտասարդներէ եւ կարմիր հարսերէ խառն կը պարեն, թեւ թեւի, ծնկածալ, մէջքածալ, գլխածածան»²⁷: Իսկ եթէ նիւթը, մասնաւորաբար երգը նա այլ աղբիւրից է ստացել, հարկ է համարել նշել²⁸: Լայն են Սրուանձտեանցի գրի առած երգարուեստի նմուշների աշխարհագրական շրջանները, Վան, Շատախ, Մոկս, Ռշտունիք, Ակն, Մշոյ դաշտ, Բուլանըխ, Ապուչեխ, Կամրկապ, Սիւրմէնիա, Կալաֆկա, Տիգրանակերտ: «Մանանայի», «Համով հոտովի» տպագրութիւնից յետոյ յայտնի դարձան վերոյիշեալ երգերի նոր տարբերակներ՝ գրի առնուած Հայաստանի գանազան ազգագրական շրջաններից, բայց Սրուանձտեանցի հրատարակումների անկրկնելի հմայքը չխամրեց.

Ծովուն հաւք մի կեր, անուն էր ուրուր, ճըտիկն էր կարմիր, սրտիկ սեւաւոր, Կապեմ բեգարեց, երթամ հետ ինոր, Են իմ դարդ գիտեր, ես էլ գո ինոր²⁹:

Սրուանձտեանցը յատուկ վերաբերմունք ունէր աղօթքների նկատմամբ: Իր ժողովածուներում նա աղօթքները ներկայացրել է թէ՛ շարքերով, թէ՛ առանձին՝ ըստ հարկի: Մի խումբը աղօթքների հմայական բնոյթ ունեն, երկրորդը՝ պարզապէս բարեմաղթութեան, օրհնանքի ու բաղձանքի: Ըստ որում առաջին խումբը գերազանցապէս չափածոյ է, ինչպէս օրինակ Հարխափան, հիւանդութեան, գելկապի, չար աչքի, տղոցկանի, իսկ երկրորդը՝ արձակ: Յատկապէս նրան հոգեհարազատ են ու սիրելի բարեմաղթանք-աղօթքները իրենց անմիջականութեամբ, սրտաբուխ, անանձնական բնոյթով, բարեպաշտութեամբ: Այդ առումով բացառիկ նմուշներ են «Վանայ պառաւանց աղօթքը»³⁰, բանահաւաքի մօր աղօթք-օրհնանքը³¹, «Հայաստանցի հայ պառաւանբու աղօթքը»³²: «Բարի լուսու, բարի Քրիստոս, դու թեւթրիկ ցաւիկ, հանգիստ մանիկ տաս ձիկ: Իմ զաւկներաց արեւշատութեն տաս. իմ դարիբնեկաց արեւշատութեն տաս. տատականեկաց ոժ ու կարողութեն տաս. իմ ձէթիկ ձագեկաց ձէնիկը դառնաս. հաւասար ննջեցելոց քաղցրիկ արքայութեն տաս: Հացին էժնութեն, ջրին առատութեն, անձրեւու շատութեն, մեր բազում մեղաց թողութեն, մեր լոս հաւատքին հաստատութեն, երկրի ճոչերաց սէր-խաղաղութեն, հայոց ազգին միաբանութեն, ազատութեն»³³: Նման բովանդակութեամբ առ Աստուած ուղղուած աղօթք-բաղձանքները յայտնի են մի շարք ազգագրական շրջաններից եւ բնորոշ են հայ ժողովրդի հոգեկան կերտուածքին³⁴:

Աւանդութիւններ Սրուանձտեանցը հաւաքել ու գրի է առել իր գործունէութեան հէնց սկզբից: «Գրոց բրոց ու Սասունցի Դաւթի» առաջին մասում, այնուհետեւ «Մանանայի» էջերում, իր միւս

երկասիրութիւններում նա յիշատակում, պատմում է բազմաթիւ աւանդութիւններ, յատկապէս պատմաստուգաբանական բնոյթի, որոնք համահունչ էին նրա նպատակադրմանը: Հարուստ է յատկապէս այդ առումով «Գրոց ու բրոց» ժողովածուն, որի առաջին մասում տեղ են գտել այնպիսի հետաքրքիր աւանդութիւններ, ինչպիսիք են Քառասուն մանկունց սուրբ աղբիւրի (Հալիլ բաբա), Կայէնի գերեզմանի ու ծառերի, Բիւրակնի, Վանայ ծովում բնակուող վիշապի, միայն գիշերները երեւացող Միծեռն կամ Զիգեռն աւանի, Մշոյ Ս. Կարապետի փոշեհան Կաղ դեւի, Փութիկու Ս. Գեւորգ վանքի եղանակ գուշակող աքաղաղի, Հոգւոց վանքի Ղուղրաթ խաթունի՝ կաղ դեւի, Կունկան վանքի, Կարետա ծռերի, Յասման Կունկան վանքի, Կարետա ծռերի, Յասման խաչերի, թուխ մանուկների, Ագրիի՝ Ագուաւաքարի, Մհերի դուռնի վերաբերեալ աւանդութիւնները: Եւ ապա Մշոյ դաշտի հետ առնչուող պատմական գրոյցը եւ չափածոյ հատուածը, որ մէջբերում է հեղինակը.

Մշոյ սարեր մշուշ է,
Իւր հողն ու ջուրն անոյշ է³⁵:

Թուարկումը կարելի է շարունակել: Մի բացառիկ իւրայատկութիւն է բնորոշ Գ. Սրուանձտեանցի գրի առած բանահիւսական ստեղծագործութիւններին եւ յատկապէս մեր նախնիների կեանքին ու գործին նուիրուած պատմական-ստուգաբանական աւանդութիւններին. վերջիններս շնչում ու տոգորուած են բանահաւաքի սիրով ու ակնածանքով: Այսպէս Մեսրոպ Մաշտոցի քարայրի մասին լսածը պատմելուց յետոյ, աւելացնում է. «Ուստի ծագեցաւ մեզ ճառագայթ դպրութեան»³⁶. Նման խորհրդածութիւններով է նա ներկայացնում Չազար սուրբ Նշան վանքի բակում գտնուող Եղիշէի

համեստ շիրիմը, որի հանդէպ նա պաշտամունք էր տածում եւ որին անուանում է սրբասնունդ ու հրեշտակակենցաղ³⁷:

Հարկ է պատշաճը գնահատել Սրուանձտեանցի բանահիւսական գործունէութեան մէջ սնահաւատ գրոյցների բաժինը: Աւանդութիւնների նման այս գրոյցները սփռուած են նրա բոլոր գործերում եւ գլխաւորապէս «Գրոց ու բրոց» առաջին մասում եւ «Մանանայում»: Նրա գրառմամբ ու հրատարակմամբ այժմ հայ բանագիտութիւնը իր տրամադրութեան ներքոյ ունի բնօրրանում հաւաքուած գրոյցներ, Արեւմտեան Հայաստանի մի շարք գաւառներում կենցաղավանի մի շարք գաւառներում գտած հաւատարած ու լայն տարածում գտած հաւատարած լիքների, չար ու բարի ոգիների, գոռնալիքների, չար ու բարի ոգիների, գոռնալիքների (գոռնափշտիկներ), «քան զմեզ դաբերի (գոռնափշտիկներ)», «քան զմեզ աղեկների», հացի հրեշտակի, «գիշերուայ մէրերի», «փարիների», «տեղելքների», «կրճեկատամների», «գրողի»՝ հոգեհառի, «կրճեկատամների», բնակունքի արտաքին նկարագրի, բնակունքի վայրերի, կատարած գործողութիւնների, արկածների մասին, որոնց հանդէպ ժողովուրդը հաւատ էր ընծայում եւ միաժամանակ երկիւղածութիւն:

Լինելով ժողովրդի ծոցից դուրս եկած գործիչ, նա խորապէս հասկացել է ու գրացել ժողովրդի մտածողութեան ու հոգեբանութեան բնորոշ իւրայատկութիւնները, ինչպէս օրինակ սէր ու մեծարում մարդու ֆիզիկական ուժի, ոչ սովորական՝ հերոսական արարքների: Նա հաւական՝ հերոսական արարքների է նմաքել ու իր երկերում տեղադրել է նմանաբնոյթ գրոյցներ Յուսկանորդուոյ վանքի տնտես Սուսուն խաթունի մասին, որը զրահաւորուած առաջնորդում էր հայ ուխտաւորներին, չերկնչելով աւազակաբարոյ քրդերից, կամ քիւշտիկ՝ ըմբիշ Զանկա Պողոսի, որը համարձակ ասպարէզ է դուրս գալիս եւ զգետնում համբա-

